Երևանի պետական համալսարանում գործող
Բարձրագույն որակավորման կոմիտեի (ԲՈԿ)
իրավագիտության 001 մասնագիտական խորհրդին
հասցե՝ ՀՀ 0025, Երևան, Ալեք Մանուկյան փողոց, թիվ 1

ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ՝ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ, ԱՍԻՍՏԵՆՏ ՍԻՄՈՆ ՖԱՐՄԱՆՅԱՆԻ

ԺԲ.00.03- Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ներկայացված Աշխեն Մանվելի Սողոմոնյանի «Տնտեսական ընկերությունների լուծարման իրավական կարգավորման հիմնահարցերը ՀՀ-ում» թեմայով ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ

Ատենախոսական աշխատանքը նվիրված է ՀՀ-ում տնտեսական ընկերությունների լուծարման իրավական կարգավորման հիմնահարցերի ուսումնասիրությանը: Թեմայի արդիականությունը առաջին հերթին փաստվում է այն հանգամանքով, որ իրավաբանական անձանց, հատկապես տնտեսական ընկերությունների իրավական կարգավիճակի, այդ թվում՝ դրանց լուծարման հետ կապված հիմնահարցերի ուսումնասիրությունը մշտապես գտնվում է բոլոր երկրների իրավաստեղծ մարմինների, ինչպես նաև տեսաբանների ուշադրության կենտրոնում: Տնտեսական ընկերությունները շուկայական հարաբերությունների հիմնական մասնակիցներն են, և նրանց գործունեությունը առողջ ու զարգացած տնտեսության հիմնաքարերից մեկն է: Այդ իսկ պատճառով ինչպես դրանց ստեղծման և գործունեության, այնպես էլ դրանց լուծարման և այլ ձևերով գոյության դադարման կապակցությամբ ծագող իրավահարաբերությունները պետք է ենթարկվեն հատուկ կարգավորման:

Տնտեսական ընկերությունների լուծարման առնչությամբ ծագող իրավահարաբերությունների տեսական ուսումնասիրությունները ևս անչափ կարևոր են, քանի որ տեսական մակարդակում արված եզրահանգումները կարող են կարևոր ազդակ հանդիսանալ այդ հարաբերությունների իրավական կարգավորմանն ուղղված օրենսդրական ներմերի հետագա կատարելագործման համար: Թեմայի արդիականությունը

կարևորվում է նաև այն հանգամանքով, որ տնտեսական ընկերությունների լուծարմանն առնչվող ամբողջական հարցադրումները համալիր կարգով հետազոտության առարկա չեն դարձել հայրենական իրավագիտության մեջ: Այս առումով որոշակի գիտական և գործնական արժեք են ներկայացնում բարձրացված հիմնախնդիրների կապակցությամբ հեղինակի առաջարկած հայեցակարգային լուծումները:

Ատենախոսության ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ հեղինակն ուսումնասիրել է ընտրված հարցերին անմիջականորեն վերաբերող մեծածավալ մասնագիտական գրականություն, վերլուծել է թեմային առնչվող իրավակիրառական նյութեր, ինչպես նաև տարբեր երկրների փորձ:

Աշխատանքը կազմված է տրամաբանական հաջորդականությամբ. այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, ութ պարագրաֆներից, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված գրականության և նորմատիվ իրավական ակտերի ցանկից: Համապատասխանաբար ներածությունում հեղինակը ներկայացրել է թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտն ու առարկան, թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը, իրավական և փորձառական հիմքերը, ընդհանուր մեթոդաբանությունը, ատենախոսության գիտական նորույթը, ինչպես նաև պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Առաջին գլխում՝ «Իրավաբանական անձի լուծարման էությունը» վերտառությամբ, հեղինակը ներկայացրել է Հայաստանում լուծարման ինստիտուտի զարգացման պատմությունը, քննարկել է տնտեսական ընկերությունների լուծարման և դադարման հարաբերակցության հարցը, բացահայտել է տնտեսական ընկերությունների դադարման բոլոր ձևերը, ուսումնասիրել վերջիններիս տարբերություններն ու առանձնահատկությունները: Արդյունքում հեղինակը ներկայացրել է տնտեսական ընկերությունների դադարման, դրա ձևերի հասկացությունները, առաջարկել տնտեսական ընկերությունների դադարման նոր ձև՝ հիմնավորելով դրա անհրաժեշտությունը և ներկայացնել համապատասխան օրենսդրական փոփոխություններ առաջարկներ:

Երկրորդ գլխում՝ «Տնտեսական ընկերությունների լուծարման հիմքերը» վերտառությամբ, հեղինակը անդրադարձել է տնտեսական ընկերությունների լուծարման գործընթաց սկսելու համար հիմք հանդիսացող իրավաբանական փաստերի ուսումնասիրությանը և դրանց դասակարգմանը, առանձնացրել լուծարման կամավոր և հարկադիր հիմքերը: Արդյունքում հեղինակը եզրակացրել է, որ լուծարման հիմքերի տարանջատումը հարկադիրի և կամավորի պետք է կատարել՝ հաշվի առնելով իրավաբանական անձի մասնակիցների ներքին կամքը, քանի որ ՀՀ օրենսդրությամբ

նախատեսված են տնտեսական ընկերությունների հարկադիր լուծարման մի շարք հիմքեր, երբ պահանջվում է, որ լուծարման մասին որոշումը ընդունվի ընդհանուր ժողովի կողմից (էջ 56): Նշված գլխի շրջանակներում հեղինակը ներկայացրել է նաև կամավոր և հարկադիր լուծարման հասկացությունները, առաջարկել առանձնացնել հարկադիր լուծարման անվերապահ և վերապահումով հիմքերը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքում ներառել հարկադիր լուծարման վերապահումով հիմքերը, որոնց դեպքում դատարանը կարող է տրամադրել ժամկետ լուծարման հիմք հանդիսացող թերությունները վերացնելու նպատակով, իսկ հարկադիր լուծարման անվերապահ հիմքերը նախատեսել վարչական կամ քերական օրենսդրությամբ՝ արդարացիորեն նկատելով, որ բոլոր դեպքերում լուծարման ընթացակարգը պետք է կարգավորվի քաղաքացիական օրենսդրությամբ:

«Տնտեսական ընկերությունների լուծարման գործընթացը և լուծարմանն առնչվող սուբյեկտների իրավունքները» վերտառությամբ երրորդ գլխում հեղինակը մանրամասն քննարկել է տնտեսական ընկերությունների կամավոր լուծարման մասին ընդհանուր ժողովի որոշման իրավական բնույթը, անդրադարձել է լուծարման գործընթացը կազմակերպող լուծարման հանձնաժողովի կարգավիճակին, ինչպես նաև հաջորդաբար վերլուծել լուծարման ընթացակարգի շրջանակներում իրականացվող բոլոր գործողությունները: Հեղինակը, բացահայտելով կամավոր լուծարման մասին որոշման իրավական բնույթը, եզրակացրել է, որ այն ներքին կորպորատիվ իրավական ակտ է՝ ներկայացնելով նաև վերջինիս հասկացությունը, բացի այդ հեղինակը անդրադարձել նաև նման որոշման բովանդակությանն ու էական պայմաններին, բողոքարկման ժամկետներին ու նման իրավունք ունեցող սուբյեկտներին: Ինչ վերաբերում է լուծարման հանձնաժողովի իրավական բնույթին, ապա հեղինակը եզրակացրել է, որ այն իրավաբանական անձի կառավարման հատուկ մարմին է, քանի որ օժտված է կառավարման մարմնի բոլոր հատկանիշներով, բայց քանի որ այն ստեղծվում է միայն որոշակի նպատակով, հետևաբար այն կառավարման հատուկ մարմին է: Լուծարման ընթացակարգը ներառող բոլոր գործողությունները հեղինակը վերլուծել է՝ դրանք խմբավորելով առանձին փուլերում՝ նման դասակարգման գործնական անհրաժեշտությունը պայմանավորելով այն հանգամանքով, որ այդպիսով կարելի է յուրաքանչյուր փուլում ներառված գործողության բողոքարկման վերջնաժամկետը պայմանավորել տվյալ փուլի ավարտով:

Ատենախոսության կառուցվածքը հնարավորություն է տվել ընտրված հարցադրումների առնչությամբ նյութի շարադրանքը դարձնել առավել նպատակասլաց, խուսափել անհարկի կրկնություններից, նախապես ապահովել եզրահանգումների համար անհրաժեշտ հարցադրումների քննարկումը: Անհրաժեշտ ենք համարում փաստել, որ

աշխատանքը գրված է գիտական պատշաճ լեզվաոճով, դրանցում բացակայում են լեզվական և քերականական կանոնների շեղումներ:

Սեղմագրի և ատենախոսության ուսումնասիրությունն ու համադրումը վկայում են, որ պաշտպանության ներկայացված եզրահանգումներն ու ատենախոսության հիմնադրույթները համարժեքորեն արտացոլված են հեղինակի կողմից մշակված սեղմագրում:

Ատենախոսության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակը դրսևորել է ինքնուրույն հետազոտություն կատարելու և հնարավորինս նորույթ հանդիսացող դատողություններ անելու անհրաժեշտ ունակություն: Բացի այդ, ատենախոսությունում նկատվում է հեղինակի պատշաճ իրազեկվածությունը քննարկվող նյութին առնչվող տեսական աղբյուրների, գիտական տեսակետների, պարկտիկ նյութերի ու միջազգային փորձի վերաբերյալ:

Ատենախոսության ձևավորումը համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից սահմանված կանոններին: Այդ կանոններին համապատասխանում են նաև աշխատանքի կառուցվածքը և ծավալը:

Միաժամանակ, գտնում ենք, որ ատենախոսությունը զերծ չէ որոշ թերություններից, ինչի առնչությամբ ներկայացնում ենք որոշ դիտողություններ.

1. Պաշտպանության ներկայացվող 1-ին դրույթում հեղինակն առաջարկում է սահմանել իրավաբանական անձի դադարման հասկացությունը և տարանջատել դադարման ձևերը: Միանշանակ ողջունելի է հեղինակի այդ մոտեցումը, քանի որ այդպիսով կարող են լուծվել բազմաթիվ գործնական խնդիրներ, սակայն առաջարկվող հասկացությունը ունի որոշակի թերություններ, որոնք կարող են պրակտիկայում հանգեցնել դրա ոչ ճիշտ ընկալման: Մասնավորապես, իրավաբանական անձի դադարման հասկացության մեջ շեշտադրված են իրավահարաբերությունների դադարումը և իրավահաջորդությունը: Այսինքն, հասկացությունը սահմանվում է ըստ այն հետևանքների, որոնք կարող են առաջանալ իրավաբանական անձի դադարման դեպքում: Բացի այդ, գտնում ենք, որ իրավաբանական անձի դադարումը միշտ չէ, որ հանգեցնում է նրա մասնակցությամբ իրավահարաբերությունների դադարմանը, հատկապես, հենց հեղինակի կողմից վկայակոչված համապարփակ իրավահաջորդության դեպքերի: Այսինքն, իրավահարաբերությունները շարունակվում են, սակայն փոխվում է դրանց սուբյեկտային կազմը, որոշ դեպքերում՝ նաև ծավալը:

2. Եզրակացության 25-րդ կետում հեղինակն առաջարկում է օրենքով սահմանել իրավաբանական անձի լուծարման առավելագույն՝ 12-ամյսա ժամկետ, որը միայն

դատարանի որոշմամբ կարող է երկարաձգվել 6 ամսով: Իհարկե իրավաբանական անձի լուծարման գործընթացում որոշակիության ապահովումն ունի կարևոր գործնական նշանակություն, այնուամենայնիվ գտնում ենք, որ առաջարկվող մոտեցումը կարող է առաջացնել էական խնդիրներ և հանգեցնել իրավաբանական անձի լուծարման գործընթացի խաթարման: Մասնավորապես, հեղինակի առաջարկությունը վերաբերում է բոլոր տեսակի և կազմակերպաիրավական ձևերի իրավաբանական անձանց, ինչը նշանակում է, որ հավասարության նշան է դրվում միմյանցից ինչպես հետապնդած նպատակով, այնպես էլ կորպորատիվ կառավարման էական առանձնահատկություններով տարբերվող իրավաբանական անձանց միջև: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ատենախոսության թեման տնտեսական ընկերությունների լուծարման իրավական կարգավորումն է՝ գտնում ենք, որ ներկայացված առաջարկությունն անհրաժեշտ է տեղայնացնել տնտեսական ընկերությունների համար և այն չտարածել նաև այլ իրավաբանական անձանց, օրինակ՝ հիմնադրամների կամ հասարակական կազմակերպությունների վրա:

3. Եզրակացության 26-րդ կետում հեղինակն առաջարկում է Մեծ Բրիտանիայի մոդելով սահմանել մինչև կամավոր լուծարումը պարտատերերի պահանջների բավարարման հայտարարագրման ինստիտուտը: Իհարկե առաջարկվող մոտեցումը բավականին հետաքրքիր է և առաջին հայացքից կարող է լուծել գործնական խնդիրներ, այնուամենայնիվ գտնում ենք, որ այս մոդելը չի գործի հայկական իրականության համար: Իրավական նորմերի համակարգային ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կամավոր լուծարման և սնանկության հետևանքով լուծարման վարույթներն ունեն որոշակի տրամաբանական կապ, և ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված պահանջների բավարարման հերթականությունը միտված է այդ կապի ապահովմանը: Մասնավորապես, եթե կամավոր լուծարումը կախվածության մեջ դրվի պարտատերերի պահանջները բավարելու հավանականությունից, ապա կխաթարվի իրավաբանական անձանց մասնակիցների և հնարավոր պարտատերերի շահերի միջև ողջամիտ հավասարակշռությունը: Խնդիրը կայանում է նրանում, որ Օրենսգիրքը հստակ հետևանքներ է նախատեսում լուծարան ընթացքում չներկայացված պահանջների կամ ներկայացված և դատարանի վճռով մերժված պահանջների մասով, իսկ «Սնանկության մասին» օրենքը սահմանում է սնանկության վարույթի շրջանակներում պահանջներ չներկայացնելու իրավական հետևանքներ: Հետևաբար, քանի որ հնարավոր չէ պարզել, թե արդյոք բոլոր պարտատերերը կներկայացնեն պահանջներ կազմակերպության լուծարման ընթացքում, ուստի նման ընթացակարգ նախատեսելը կարող է խաթարել կամավոր լուծարման տրամաբանությունը:

Բացի այդ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ օրենսգրքով սահմանված հերթերն ունեն որոշակի տրամաբանություն, և եթե իրավաբանական անձն ունի թեկուզ որոշակի գույք, որով կարող են բավարարվել թեկուզ առաջին և երկրորդ հերթի պահանջները, ապա դրանով հետագայում սնանկության վարույթում կապահովվի որոշակիություն և պահանջների ծավալն ավելի նվազ կլինի:

Ատենախոսական աշխատանքի կապակցությամբ արտահայտված վերոնշյալ նկատառումները, սակայն, կրում են բանավիճային բնույթ և չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժանիքները:

Մեր գնահատմամբ՝ Աշխեն Սողոմոնյանի հեղինակած «Տնտեսական ընկերությունների լուծարման իրավական կարգավորման հիմնահարցերը ՀՀ-ում» վերտառությամբ ատենախոսական աշխատանքը լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից՝ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող ատենախոսական աշխատանքներին առաջադրվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԹԵԿՆԱԾՈՒ, ԱՍԻՍՏԵՆՏ՝ **Ս. ՖԱՐՄԱՆՅԱՆ**

10 .11.2021թ.

«Ս. Ֆարմանյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ»՝
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ՏԵՂԱԿԱԼ՝
ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝

Հ. ԽԱՉԻԿՅԱՆ